

4,500,000. მაგნელების ხუთი უდევს 300,000,
მოცე 10,000, მუნიციპალიტეტები 20,000,
მთავრული სამსახური 43,000, მუნიციპალიტეტები 43,000,
მთავრული სამსახური 7000, მთავრული სამსახური 20,000, ასე
სამსახური მთავრული სამსახური 90,000. ქა-
ლა გრაფის ტერიტორიაზე დასახური 2,500,000 ასამისტები. ცენტრალური სამსახური 7 მდგრადი, ასევე მთავრული სამსახური 40 და მთავრული სამსახური 3600 ასევე. კინ 1847 კა-
ვის იმანავით 4450 ხუთი უდევს და მთავრული სამსახური.

Հիմայ, բացի ի Սիւէկի պարանոցին կոզմի երկիրներէն (Սիւէկ, Խամայիիիէ, Բորդ Այստ) համարուին 60 վիճակը, 113 քաղաքք, 3340 գիւղք. Միջին իմա հաշուով թէ բնակարանաց թէ բնակչաց թիւն իրրեւ կէօն է Արտասկի գրածին և ը դարսու մէջ եղածին: Հաւանօրէն մօտաւոր վիճին տարիներ աւելի սույզ մարդահամար նղած պիտի ըլլայ, զոր գեռ չունիս ի ձեռնեն:

ՈՒՂԵԻՐՐՈՒԹԻՒՆ ԸԱՆՏՐԻ ՅԱՐԵՒԵԼՈ

(Stru. 1^o, 206)

19

Էլմիածնի վանաց այցելուքին. — Երեսանոց տեսիլն ու կլիմայն. — Արարատայ վերելից կարառանի հանդերձանք. — Գիշերային մեկնում դեպ և յԱրալը. — Գոյշասար գիշո և Ալորիք. — Երասին գետը կ'անցնինք:

27 յունիս. — Երեւան պահուելով՝ անհրաժեշտ էր մեզ այցելել անկե 10 հաղաքամետը հեռի Էջմիածնի վանաց, որ Հայոց Հռոմը համարուած է: ինչպէս ծանօթ է, Էջմիածնի հռչակեալ և վաղեմի վանքը՝ Գրիգորեան Հայոց պատրիարքին կամ կամողիկոսին բնակվայրն է, Վաղարշապատ գիւղին մէջ, որ պահած է հին քաղաքին անունն, որոյ աեղուոյն վրայ շինուած է, ուր երբեմն անուանի և ի պատուի էին Անհանապ, հայկական Աստղդական պաշտամունք:

Հայաստանի քաղաքաց մէջ նշանաւորներէն մէկն եղած է վաղարշապատ : Հիները Արտիմէդ քաղաք կը կոչէին կամ Անահուայ՝ և հիմարի թիմինը կը հանեն մինչ յերուանդ Ա թագաւոր, որ կ'ապրէր ի վեցերորդ դարու յառաջ քան զնասարակաց թուական : Տիգրան Բ Արշակունի թագաւորն Քրիստոսէ հարիւր տարիի յառաջապահն՝ առաջին գերութիւններու մի դաստանց . և լաճառաշահ մեծ քաղաք

մ՞ըրաւ զայն : իւշ քիչիսկ կամ Երեք Եկեղեցիք կը կոչեն, որովհետեւ բաց ի պատրիարքական եկեղեցին՝ որ ի մեծ մինաստանին, կամֆորէ նաեւ զեկեղեցիս որբուհեացն Գայիանեայ և Հռիփիսիմեայ :

Այն հոչակաւոր քաղաքին՝ որ Հայոց թագաւորակիան ոստանն էր՝ ցամք ծեկ, սրբի յիշատակ մասցած չէ, բաց ի երեք եկեղեցիներէն և ի վանացն՝ ուր կը նատին պրոյն Գրիգորի յաջորդուն, որուն՝ ըստ հայոց աւանդութեան, երեւառ Քրիստոս ի անդուն: Ի յիշատակ հրաշխօն կասոց սուրբն Գրիգոր զեկեղեցին և կոչեց իշխանին, որ այն օրէն մայր համարուեցաւ Հայաստանի ամեն այս ներկեցեաց, կարպէ զուրս պատիւ: և մեծարանը բնութաներուի:

Յանձնաբարական մը ունէինք առ ուղղիչն ճեմարանին լշմիածնի, որ սիրայիր ընդուանելութեամբ այլ և այլ եպիսկոպոսաց ներկայացաց զմեր. և նորս մանրամասն ցոյց տուին. մեղ զեկեղեցին և գանձատունը՝ յու-

րում հրաշալի ճոխոթիւնք ամփոփուած են : Եկեղեցին՝ որ զանազան ժամանակներ նորոգուելով՝ զժրազզաբար քանի մասերն առաջադրուած են, զուտ բիւզանդեան ճարտարապետութիւն ունի, ներքին մասը մասնաւուած է առաջին ճարտարապետութիւն ունի, ներքին մասը մասնաւուած է ամենազեղեցիկ է : Որմննըը ծածկուած են լաւ կերպով պահուած նկարներով, որոց ժամանակին մութ զոյն մը առնդրով՝ աւելի խորհրդալից բանաստեղծութիւն մը կը ներկայացրէնքն, ինչ որ հին եկեղեցեաց միայն յատուկ է տալ զայն : Գունաւոր զեղեցիկ ապակինսերէ մուտ կը գործէ արեւելեան զեղեցիկ ախորժակաւ և ճոխաբար քանդակացրծեալ եկեղեցւոյն ներքին կողմը՝ անոց



Կարողիկին Եզմիածնի .

ըստ մը, բազորովին հրաշալի կերպարանք մը տալով անոր :

Ազատ կ'առաջնորդեն մեզ ի սրանս ուր պահուած են եկեղեցւոյն յատուկ զանձերը, ուստի կը զատուինք շշացած հետաքննական այցելութեամբն արծաթեղինաց և ական պապուակնաց որ այնչափ զարերէ ի վեր աշ-

խարհիս ամէն կողմ՝ գառուած ազգայիններէ զրկուած են յիշմիածին : կ'անցնինք ապա ի սրանն՝ ուր բարձր գարաններու մէջ ինամով գրուած են քանձնայական զգեստ, յորոց ուսննը հնութեան ձեռագործք են : Ամենաշեղեցիկ կերպար՝ սկիեզէն և արծաթեայ բանուածներով գալարուն՝ որ ամբազ կենաց

յարատեւակ աշխասանաց արդինք կ'երեւին, աչուրնաւ առջեւ կը դրուին շորջառաց և ուրանիրու ձեւերով՝ կը տեսնուին հոն արեւելից և արեւմնից ամենահին մետաքսագրդութեան ճարտարագործ արդասիր. և անշոշա զեղեցկազոյններէն են Ախոն քաղցին ձեռաւ կերտու:

Քանի մը ժամուան մէջ ակնարկ մը միայն կրնանք ձգել բոլնողակ շինուածին վրայ, ուր նախաճաշնիս ալ ընելով՝ քիչ մը տան հանգեցանք: Ամենէն եռաբը ձգեցինք բոլոր աշխարհի մէջ համբաւեալ մատենապարանին այցելութիւննիս:

Դառնալով. յԵրեւան, նաչալնիկին այցելութիւնն ընդունեցինք, որ քաղաքապետին կողմանէ: զգիւած էր օգնելու, մեզ կարաւանը զատրաստելու: Ճամբրողովթեան նոր ընկերակից մ'այլ ներկայացաւ, կողակաց զըլիւաւորի համազգեստով, որ հետերնիս Այրարատայ փրայ բարձրանարու փափաք. կը ցուցընէր: Յուսալով թէ իր և հետը եղող երկու կողակաց ընկերութիւնը ասպանովութիւն մը ըլլան թրզաց վեմ, որոցիէ կը վախնային մերիներն, պարոն Շանտը ընդունեցաւ այս օգնութիւնը, թէպէտ և այնչափ խոհեմական չէք՝ անկախութեան ճախանձորդ շեղին մէջ մտնել այնափախ հանդերձանք ուժոյ. և կազմութոյ:

4 յուլիս. — Բովանդակ Անդրկաւասի մէջ անուանի է Երեւանու կիմայն՝ իր կարպէ դրու բարեխասնութեան ասութնաւուը. զի ձմեռաւան մէջ ներմաշափը 26 հարիւրորդ աստիճանի կ'ընէր, և տասուը քառուասնէն վեր կը բարձրանայ, և փոշին: որ այս եղանակին մէջ հանապազրեայ հնդմոլ կը թանձրանայ, անսանելի կ'ընէ բնակութիւնը. ուստի քաղաքացիք երբ ամառուան շոզը կը սկսի զպակի ըլլալ, կը փութան փիւմել մերձակայ բարձր հողասուն աեղութեանը:

Երեւանի քաղաքացին աեսովթեան ամառանցն հաստատուած է ի Դարաշիշակ, մաշականաց փարրիկ զիւղին մէջ, զոր կը պատեն ցարտսեաց անսառը և կառուցուած է ի դասիլոցի Ալակէօզի:

Քաղցին օգոս վասառողջովթեանը վրայ հետեւեալ կը պատեն, որ առակ դարձած

է կրենց մէջ է կ'աւանդեն, թէ երեք Հայք, մին Աստրախանցի, միւսն Տփղիսեցի և երրորդն Երեւանէն, մէկտեղ գտուելով, ասջինը կ'ըսէ միւս երկուսին. և Մեր քով հարուստ աղքատէն չես կրնար զանազանել: Տփղիսեցին կը պատախանէ. « Մեր քաղցին համար կ'ըսն, թէ երիտասարդն՝ տարիքը առած ծերունիէն շտարբերիր »: — « Աւազ, կ'ըսէ երրորդն, յԵրեւան անկարելի է որոշել ողջը մեռածէն ու ու. »

Մերնք ալ կը զգանք այդ անհանդուրժելի կիմային արդինքը մեր վրայ: Հեղձամիջուկ ջերմասթեան տունջեան կը յաջորդէ անհով և մեղներով անհանգիստ ընդող. գիշեր մը սովով կը բացատրուի բնակչաց սովորութիւնը ազատ օգոյ և բացօվթեայ սրահից մէջ զիշերը հանջելու:

Հազիւ թէ արեգակը կը ծագէ, թէպէտ և ջերմամբ նեղեալ, կը փաթամ անիծեալ ունեես գորս ձգել. ինքզինքս, գէթ գորսը ճամբուն վրայ, գունոյ և անակնիկալեաց հետաքինող աշքերու հանապահօրեայ նորանորը կը ներկայանան: Շըջող վաճառականք իրենց ձայնավ օգը. կը լցցընեն, պարսիկ, թաթար, ուսւ և հայերէն լեզուներով գովելով. և հրաշակիր իրենց ապարանքը: Հետաքիննական է արեկեան կենաց արեմսականին հետ այնշափ մերձաւորութիւնը, իրարու հետ բախուիլը. Երեւանի մեծ փաղոցին մէջ կը ափսնուին որ սուրան ամենաճնի փայտօնունք, փառակազմ հեծեալը, ուսւ ապայից համազգեստով որ կը փառնուին հայ և Կերովական գողթականութեան վերաբերող տիկնանց արգութարին հետ, ինչպէս մեծ մայրաքաղաքի մը ծառուղեաց վրայ: Անդին կը նկատեն արջասոց կարաւան մը՝ որոց կ'աւաջնորդեն ցուրտ աշքեր ու ամենեին աննշան զէմբեր տնեցող թարգր. արհամարհու շրթամբը այդ քաղաքակիրելոց մէջ. քիչ մը հեռու ուղտը յամառ նստուածքով մը գետնին վրայ և կանչուրասուզով թնագոցընելով օգը՝ և կ'իմաննը թէ արեկելքի մէջ ենք: իրարդէ բոլորովին ասրբեր ապաւորութիւնը կ'անցնին մոքէկ. յարափիփու աեսարանք՝ սկզբնատիպք, ծիծաղարթք, հրամանագիշք, ախուզք, նոր առեւնող ճանապարհորդին մեծ հանդր կը պատճառեն:

Երեւանու մէջ՝ միակ տեղին ուր կարելի է վայրինական ապաստանարան մը փնտոել փոշիէ ու արտաքյ կարգի ջերմութենէ, հասարակաց պարսէցն է. ուր հովանաստուերը՝ առ պահառութեան անքրեւյ, դեղնազյն են և ոչ կանաչ։ Ռուսական երաժշտափումը մը հնո՞ն կը նուագէ։

Միեր պատրաստութիւններն արդէն լմբնացած են, և առաքութենէ խուսելու համար կէս զիշերուան ձգեր ենց ճամբայ ելնելը, Յողնածութենէ և մանաւանդ ջերմամբ սաստիկ նեղուած, յարկածածուկ ճեմելիքին մէջ կ'երկընամ՝ տեսնելու զալիքին մէջ կատարուած բեռները վերցընելու կատակերգութիւնը։ Նոր կարաւանիս կը կազմուի Երեւանու Թաթարներէ, որ կը վարձեն մեզ հնծնելու և բեռնբարձ ձիան։ Առաւօտեան ժամը մէկին՝ նախալիկը կու զայ անձամբ նախազանելու մեր չույն, և վերցընելու մէջտեղէն վերջին յամրութեանց պատճաններն։ Ժամը մէկ տ. կիսուն կարաւանը տեղէն կը շարժի. ես ցուն ըլլալու վրայ էի՞ երբ կու զան ազգել ինձ թէ ձիու վրայ հեծնելու ատենն է։ Այսներնիս ալ ճամբայ կ'ելնենք գրեթէ կիսակենան, յողնածութենէ և ի քնոյ շարաշար հեղուած։

Ինչպէս եկած ատեննիս, հիմայ ալ սուր հանդակի ճամբովը կարաւանն կը յառաջէ յԱրարատ, որոյ մեծախյելու սուսերական ծրագիրը՝ անհաւատալի ճշութեամբ կը նկատենք ամենաջիխ զիշերոյ պարզութեան մէջ։ Գագաթան ձիւներն իրը ի հայելոջ կը տեսնուին լուսնի արծածափայլ ճառագայթից տակ, և միայն այն գեղարաշ աեռարանն բաւական էր արթաւն պահելու մեր աշուրները։ Բայց, աւազ. զիշերային զովութենէն յաղթուած՝ ձիու վրայ քուն կ'ըլլամ, որ և նա կէս քնոյ մէջ է։ Ուզտերու բազմաթիւ կարաւաններ կ'անցնին ճամբուն վրայ, այնպէս լրին՝ որ միայն վարչաց ձայնը ինձ ընդուսուով կու տայ, ծանուցանելով որ ինքնուրու ամուգ բռնեմ։

Կամաց կամաց լուսինը կ'ազօտանայ՝ նարածադ արշալուայն զիմաց. և ես վայրիեաններն կը թուեմ որ գեռ եւս զմեղ կը բաժնեն Գամարդուէ, որ մեր առաջին կայարանն է։

Բայց ժամը վեցին՝ զիմացնիս կ'եղնէ Գոյլասար, որուն բնակիչը մեծապէս կը հետաքրքրեն ամռամինս. աստիք թէպէտ խոնջ՝ վար կ'իջնէ վեղը աշքէ նացընելու. իսկ ես ձիու վրայ կը թամ, վախնալով որ եթէ իջնեմ՝ յողնածութենէս կարող շրյամ նորէն վերելակիւ. Ասորիկ կամ քաղցէացիք են Գոյլասարի բնակաստանի Ռէվմիոյ կամ Սալմաստ գաւառներէն գաղթեալը. գաղթականութիւն մը որ ցարդ կը շարունակուի Ռուսաց կառավարութեան շնորհած դիւրութեամբ։ Յառաջ՝ մասամբ նեստորականը էին կրօնիւ, իսկ հիմայ յունազաւան. և ինքն զինքնին սերեալ կը համարին ի Ներրովթայ և յԱսուրայ, և Քաղցէացիք կը կոչուին։ Ստոյդ է որ իրենց լեզուով, սալորութեամբ և բարուց մեծապէս հետաքրնելի ժողովուող մ'են. և լեզունին այնչափ մերձաւոր հերքայականին, որ Հրեայք և Ասորիկ հեշտեաւ կ'իմանան մէկմէկու խօսքը։ Կը տեսնեմ զեղագէմ օրիորդը՝ որ աղբիրէն ջուր հանելու կ'երթան. բայց և բազմութիւն տկար և հիւանդ տղայոց այս վատառով զիւզին մէջ. այնպէս որ տասն հոգիէն՝ ջուրը աշքին ըստը կորուսած է կամ աշացաւոթեամբ կամ ծաղկի հիւանդութենէն, որ իշրախայ բովանդակ հուտին մէջ յաճախեալ տիս մ'է։ Բայց զիս զարմացընողը գեղեցկութիւնն է՝ ոչ տկար սեռին, որ չունին զայն, այլ երիկ մարդկանց և ծերունեաց մանաւանդ։ յորս երկու հոգի կու զան հետերնի տեսնուելու, և կատարեալ տիպարը են հրեայ սերնզեան։ Կու բովանդակ նշանակութեամբ. յարգանաց արժանաւոր նահապեաց, որ կ'ընկերն մեզ դիւյին մէջ շրջագայելու. կենդանի ու փայլուն աշշեր ունին, ճիւնակերպ մազեր ու մնարուց. Թաթարաց հեա մերթ ընդ մերթ ազգախանութեանց յարաբերութիւններ կ'ունենան Ասորիկ. և որովհեաւ Հրեացմէ զատ ուրիշը լեզունին չի հասկընար, Արարատականի գաւառացի թուրք բարբառը կը գործածեն իրարու հետ։

Առաւօտեան ժամը ութին կը հասնինք ի կայարանն Գամարդուի, ուր ընդունայն կը շանամ կուրիկ բարեկաստութեանը գէմ, որ կէսօրը քառասուն աստիճանի կը բարձրա-

նայ : — Չափարաց միոյն սենեկին մէջ կը տեղաբուիմ, ուր պատուական թաթար մը ամենայն խնամքով մժեղաց գունդագունդ բազմութիւնը կը հալածէ, որով կրնամ քիչ մը ատեն հանգիլ քնով : Ժամը վեցին կ'արթընցընէ զիս ամուսինս, որովհետո զիշերուան մութը չկոխած՝ հարկ է Երասիւն անցնելով ժամանել յԱրալը :

Անմիջապէս ճամբայ ելնելով երբ կը հասնինք յափուն գետայն՝ արեգակն բոլովակապէս հորիզոնին երեսէն կ'անհետանայ. և որովհետև նոյն առջն ծանծաղ էր՝ կարաւանը առանց գմբւարութեան ներս մը դուեցաւ, իսկ մենք Գամարըն Արալըքի հետ յարաբերութեան զնող տափակ նաւակին մէջ նստանք : — Կարաւանին այդ անցըքը, Ճիպանաց գոշինը՝ որոնք շթթվութելու համար բեռնաբարձ անասնոց վրայ բարձրացած են, մեծ ոգևորութիւն և գեղեցիկ տեսարան մը կը ներկայացընէ այդ վերջալուախն ատեն :

Գիշեր է արդէն երբ ճամբայ կ'ելնենք : Կարմիր ու թանձր ամպերով կիսովի ծածկուած լրսինը կը լուսաւորէ ճամբան, որ կը կորէ ընդարձակ ճախճախուա զաշտ մը՝ բոլորովին անապատ և լի եղեգամիքը : Գիշերային տիսուք լրութիւնը սպիզ բանով շրնոր հասուիք՝ բայց եթէ թունաւոր գորակց միաձայն իհնամամք, որ թաշրտելով կը զարնուին մեր երեսոց և ձեռաց : Երկինք կ'ամպոտին, օգը կը ժանրանայ. և թէպէտ Երասիսայ ու Արալըքի մէջ միայն եօթն վերստ է հեռա-

սրութիւնն, բայց ճափինային ըլլարուն՝ իսծի եռապատիկ կ'երեմի. զոր վերջապէս ի գրլուին կը հանենց, ջերման առաւ պաշար մը հետերինս տանելով :

Այսպիսէ տեսարանով մը մոցիս մէջ արթնցած ախուր զաղափարները հեռացընելու համար, Գեղրդէն կը ինզրեմ որ արաբէրէն երգ մը նուազէ. վասն զի հետերինիս անոնց գեղեցիութեան խօսքը կ'ընէր, և թէ այնպէս զմայլական են՝ որ մարդ զանոնք լրուելու ատեն կը փափաքի մանուան. գէթ անանի կ'երկնար մեր ծառային ջզային փափոկ դրսութեան : Ուստի նստելով գովերնիս, իր անոյշ ձայնավը՝ սիրային երգ մը կը նուազէ : Թէպէտ մեծապէս կը յարգեմ արաբերէնը, բայց երգը՝ ամենեին տարփանց մը շազզեց ինձ մանուան...:

Հետաքննական կտորին մէջ՝ կը ներկայանայ մեզ սառերախառն ծառաց շարք մը, և կը մանենք ի զայտն Արալըքի, ի առորոտ Արարատայ : Ֆնողակաց գնդի մը բանակատեղին է, պահապանաց սահմանատեղոյն : Երբ կարաւանը կը մանէ ի հրապարակն, երեկոյեան աղօթից համար հոն ծողլուած են կողակը. և գունդը՝ յուսաց ազգային երգը կը հնացընէ : Մէկէն հրամանատարին կ'երթանց, որոն արդէն իմաց տրուած է անկէց անցնելնիս. ուստի մեր տրամադրութեան տակ կը ձգէ բնապարձակ և գեղեցիկ սենեակ մը, կապերաներով և բազմոցներով զարգարուած, ուր հանգստեամբ պիտի անցընեմք գիշերը :

Շարայարելի .

